

ԱՐԶԱՊԱՆԳ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Ի ՅՈՒՆԵՍԿՈՒՆ ԱՌԹԻԻ
(շար.)

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐԶԱՊԱՆԳ

(ձ.Ա. տարի 15 Օգոստ. 1947)

ՈՂՋՈՅՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻՆ

Հոկտեմբեր ամսուն մէջ, այս տարի, փառահեղ տոն մը ունինք, եղական յարեւան մը, հազարաւոր տարիներու մէջ իսկ առաջին անգամ պատահած հարիւրամեակ մը, հայ մաքի, հայ գրի, բիւրեղացած հայ խօսքի տօնը, որ հայ մամուլի երկրպագունը՝ «Բազմավէպ Հանդիսարան»-ի հարիւր հատորներով կու գայ տալիս ներկայացնել հրճուանքի, Հայոց մատուրական աշխարհի:

Հնչեցուցէք փողերն, հայապատկան որքան եկեղեցիներ որ կան, մէկտեղ զօգանջեն զանգակները եւ թնգանօթի հարիւր հաւրուածներ թող խլացնեն աշխարհի բնակիչները, հրաւիրելով անոնց ուղարկութիւնը Հայուն տօներուն տիպին ու աւետիկին: Տարիներ առաջ Առաւելաձայնի թարգմանութեան հազար հինգ հարիւրամեակը, ներկայիս մատուր զարթոնքի մը հարիւրամեակը, ապա մի քանի տարիէն Վարդանանց «մահ իմացեալ անմահութեան» երկրորդ հազար հինգ հարիւրամեակ մը: Աշխարհի վրայ բոլոր հայ խմբագիրներուն, զրադէսներուն, ամենէն համեստ գրիչ շարժողներուն տօնն է այս: Մէկգի պահիկ մը ամեն քէն ու տարակարծութիւն, նոյն սրախութիւնը, նոյն գնահատանքը, նոյն շնորհաւորութիւնը խառնեն ու բաժնեն իրարու մէջ:

Հայ մամուլի այնքան մաշեցուցիչ աշխատանքէն, այնքան յուսահատեցուցիչ կացութենէն ընկճուողներ կրնան յուսադրուիլ թէ, թերթի մը համար հարիւրամեակ կեանքը միայն երեւակայութեան ծնունդ չէ

հազար իրականութեան համապատասխանող վիճակ մը, եթէ արժանիք ու աւելիք միայն անոնց սակարկութեան աշխատանքի: Մէկ մարդու, նոյնիսկ մէկ քանի սերունդներու գործը չէ թերթ մը հարիւր տարւան հասցընել: Սակայն հիմը եթէ կարելի ըլլայ ժողովարդի հոգիին մէջ գնել, պատանէշներէն սրբան գործաւորներ իյնան, նորեր կը շարունակեն գործը եւ անոնն ու գաղափարը կ'անմահացնեն:

«Բազմավէպ»-ի տեղիքը յոյսովը նախորդ զարն մարդարեւերէն հոչակելու է այսօր: Ահա փաստը որ հարիւրամեակ գործի մը կանխապատկութիւնն ունեցաւ, եւ այն ինչ գործ. ամենէն փառաւոր կառուցուածքը կը ներկայացնեն երբ մէկտեղ գան հարիւր հատորները, որոնց չեն կրնար հաւասարիլ ոչ մէկ ճարտարապետութիւն, ոչ մէկ կրեւստեան հարստութիւն. ոչ զիտական հրաշալիքները կրնան անոնց խաղաղութիւնը տալ, ոչ որեւէ հաճոյական մատուցում անոնց հրճուանքը առթել: Եթէ անոնց մէջ խորաւորուած, սովորական տեղի ընդարձակ ու տարածուն է, լեռներէն աւելի բարձրաբերձ. ստորտաշն մանուկ մը պէտք է ճամբայ ելլէ որ ալեւորութեան կարենայ գաղաթ հասնիլ: Վեառի մը նմանցնելը խեղճուկ օրինակ մը պիտի ըլլար: Այլ հոսի միշտ զուլու ու հանգարտ, բայց սրուն երկայնութիւնը չի շափախիր ոչ քերամիւրով, ոչ լուսոյ ալիքներով: Բայց ինչ նմանութիւն տանք որ մատուր յարմարի. անմահութեան օթեան մը, ուր անուն մը ունեցողը կ'ապրի յաւիտ, եւ միաք, խօսք ու շարժում գործն ու կենդանի ազդակները պիտի մնան հայ կեանքի:

«Բազմավէպ», բազմապիսի ծանօթութեանց նշանակութեամբ միտուած անուն մըն է, որուն իրադրութեան վերաբերեալ գործը մը գոտակները կը կրէ ահաւատիկ:

Սնիկա «բազմաւ տարիներու» բերքով եւս իր այս հանգամանքը ճիշտացուցած է:

Բայց «Բազմավէպ» միայն տարիքով ու քանակով չէ որ հայ մամուլի երկրպագունն է: Որքան որ ժամանակակիցական համեմատութեամբ անհասանելի է իր մեծութիւնը ներկայիս գոյութիւն ունեցող տարւոյ քան, առ առաւելն յիսուն տարեկան հանգէտներէ, մեծ է նաեւ այն առաջնակարգ յատկութիւններով, որոնք միայն իր սեպ-հականութիւնն են:

«Բազմավէպ»-ի մէջ ազդարարական վրիպակի գրեթէ չեն հանդիպիր: Հակառակ այնքան ուղղամտ ու մանրամասն բովանդակութեան, դժուար է հանդիպիլ մէկ գրի, որ աչք խորած ըլլայ իր անգէն զուր գանձերով: Սնիկա հրաշալիք է պարզապէս ու ազդարարական զիւրապնդողութեամբ:

Աւելի մեծ հրաշալիքը ու «Բազմավէպ»-ի անմահացիլի զիրքն է լեզուի ճշտութեան եւ ուղղութեան մասին անթերի ըլլալը: Ուղղադրական, քերականական, նոյնիսկ գրական ուղին շատնց ճշտած, այն ճամբէն կը յառաջանայ անուայթաք: Հեղինակաւոր է անոր ձայնն այս մասին, մանաւանդ ստալե խիտ ու ազդու: Եւ գործերուն ամենէն զերակշիռ մասը այս եղանակով է. մտերմ-արբանեակ թերթերէ շատեր, որքան որ իրենց խելքին հասած է, իրենց սխալները շակած են այս «արեւուն» արձակած սլաքներէն:

«Բազմավէպ»-ի զեղարուեստն ալ, հաւանական անոր պաշտօնակցական զիրքին, անմարդկային մնացած է: Գուրդինն ալ հաւասար խնամք տարուած է ներառնին: Կարծես չափի համար մաղ կը գործածէ, այնքան որ անհնար գործած է ծաւթիւն մը պատահիլը: Վեղարուեստական ազդարարութիւնը նախ աչքը կը յագեցնէ, ուրիշ իր պատահան հոգիին ալ կը թափանցէ վերին աստիճանի խնամատ բովանդակութեամբ միտման: Բայց պէտք է ըսել թէ, վերջին տարիներս, առաջարկ մեքենան այս հմայքէն շատ բան պակսեցուց:

«Բազմավէպ»-ի տեսքը ազնուական է,

պատկառազդու, ատոր համար մեծ պատիւ է ստորագրութիւն մը, յիշատակութիւն մը ունենալ անոր մէջ, եւ թերթն ալ անոր համար իր զիրքը բարձր պահած է որ կրցած է լրջութիւն պարտադրել իր սահմաններէն ներս:

«Բազմավէպ»-ի լուստուր փաղանգը որ այս հարիւրամեակը կերակուց, արժանի է մեր ամենաւս յարգանքին ու երախտագիտութեան: Մեր աշխարհէն մեկնողներուն յիշատակին առջեւ կը խոնարհինք, եւ անոնց որ տակաւին քրտինքի տուրք կու տան, աւելի կարողութիւն կը մոզթենք:

ԼԵՆԻՆ ՍԻՄՈՆԵԱՆ

ԿՈՌԵՆԿ ՖԵԼՏԱՆՔԻԱ (ԽԹ. տարի Կոյ. 21 1947)

«ԲԱԶՄԱՎԷՊ»-Ի 100-ամեակը

Վենետիկի մէջ, Հոկտեմբեր 18ին եւ 19ին, մեծ շուքով տեղի ունեցած են Հայ մամուլի աւագադրին եւ մեծաշարք անդամին՝ «Բազմավէպ»-ի Հարիւրամեակի Յորեկինական հանդիսութիւնները, որոնց ներկայ եղած է, Միլանէն, իր տիկնոջ եւ Վենետիկեան շրջանաւարտ որդւոց հետ, ԿՈՌԵՆԿԻ Խմբագրին աներորդին՝ Տիար Տիգրան Յովակիմեան, աշխարհի բոլոր կողմերէն եկած Հայ եւ օտար մամուլի ներկայացուցիչներու եւ ականաւոր անձնաւորութեանց հետ միասին:

Այս առիթով լոյս ընծայուած է, երկար պատրաստութիւններով, «Գեղունի»-ի բացառիկ թիւ մը, շատ ճոխ բովանդակութեամբ, ինչպէս կը տեղեկաւորէ մեզ Տ. Յովակիմեան: Եւ մենք վստահ ենք, որ այն իր անունին արժանի հոյակապ հրատարակութիւն մըն է, ինչպէս եղած են այդ անունը կրող Վենետիկեան հրատարակութիւնները, տարիներ առաջ:

«Բազմավէպ» բանասիրական, դրական, պատմադրական եւ ազդարարական հանդէս մը եղած է, բովանդակալից դրական բարձր ոճով, ալ ժողովուրդին հասկնալի եւ մատչելի ոճով, որ ահա կը հանդիսա-

նայ մամուլի հարկերամեայ կոթող մը, որուն արժէքը ըստ արժանւոյն գնահատած են, առանց դաւանական եւ դադարաւիական խտրութեան, Հայ ազգային-մշակութային բոլոր հաստատութիւններն ու դործիչները՝ ամբողջ չորս սերունդներ, Հայաստանի մէջ եւ Հայաստանէն դուրս:

Ոչ միայն վերջին հարկերամեակի քաղաքական եւ տնտեսական վերափոխումներով լեցուն Հայ կեանքին մէջ եւ Հայաստանէն հեռու օտար կղզիի մը վրայ, այլ սեփական պետութեան հովանիին տակ եւ իրենց Մայր Երկրին մէջ ապրող ժողովուրդներու կեանքին մէջ, պարբերաբար թի մը հարկերամեայ դոյութիւնը մեծ յաղթանակ մը կը նկատուի:

«Բազմալեզու»ի հարկեր տարիներու երկար կեանքի փառահեղ իրողութիւնը բովանդակ Հայութեան հիացումին եւ սքանչացումին առարկայ կը հանդիսացնեն Վենետիկեան Հայրերը, որոնք զրկանքներով եւ յոգնատանջ աշխատութիւններով «Բազմալեզու»ի լոյսը վառ պահեցին ամբողջ դար մը:

Եւ «Բազմալեզու»ի հարկեր տարի ան ընդհատ հրատարակութեան փաստն իսկ անժխտելի ապացոյց մըն է թէ Հայ ժողովուրդին բոլոր խաւերէն գնահատուած է այս թերթը:

Եւ մենք կը սիրենք յուսալ, որ Հայ մը աւանդականներն ու զբաւէր եւ ընթերցասէր հրատարակութիւնը աւելի լայն չափերով պիտի օժանդակեն Վենետիկի Մխիթարեան Հայրերուն, «Բազմալեզու»ի Հարկերամեակին առթիւ ստուարացնելով անոր բաժանորդներուն թիւը:

Մեր աւագ պաշտօնակից Վենետիկեան Հայրերուն, «Բազմալեզու»ի խմբագիրներուն եւ աշխատակիցներուն կը մաղթենք երկար կեանք, բազում տարիներ շարունակելու այս արժէքաւոր թերթի հրատարակութիւնը եւ փոխանցելու զայն իրենց յաջորդներուն, ինչպէս իրենցմէ առաջ անցնողները կտակեցին զայն իրենց, որպէս թանկագին աւանդ մը, որպէսզի շարունակուի հրատարակութիւնը «Բազմալեզու»ին հարկերամեակէ հարկերամեակ, դարէ դար, ի փառս Հայ Մշակոյթին եւ զայն կերտող անմեծ Հայութեան:

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ (Բազմալեզու, Թ. Զոհմ.-Գեղեց. 1948)

100 ՏԱՐԻ «ԲԱԶՄԱՎԵՂ»

(1843-1943)

Համաշխարհային տխուր դէպքերու հարկադրանքին տակ «Բազմալեզու» հրատարակելով հարկերամեայ իր յորելինական թիւը, կը թեւակոխէ կեանքի նոր հանգրուան մը, անշուշտ եւ ինքնամփոփ:

Հարկեր տարիներու երկար ու պատկանելի շարք մը ապրեցաւ ան, որուն ընթացքին կերտեց զորք մը խկապէս հոյակապ, եւ կատարեց զեր մը անվիճելիօրէն շքեղ:

Հայ ժողովուրդը տօնած է բազմաթիւ յորելաններ եւ ունեցած է շատ մը վատտակաւոր յորելեարներ, սակայն «Բազմալեզու»ի պարագան աննախընթաց է մեր գրական պատմութեան մէջ: Աննախընթաց է իր տարիքով, աննախընթաց է իրրեւ ձեռնարկ իր արդիւնքով, ու աննախընթաց է նաեւ իր կատարած բարձր գերով:

Արեւմտեան քաղաքակրթութեան լոյսով ողողուած «Բազմալեզու»ի հարուստ էջերուն վրայ հարկեր տարի անընդհատ վառ մնաց մեր գրականութեան, արուեստի, գիտութեան ու բանասիրութեան սրբազան ջահը:

Անոր կեանքը բարոյական, հոգեւոր եւ իմացական վերելք մը եղաւ վերջին դարու մեր փոթորկալի ու արիւնոտ իրականութեան մէջ, եւ ուսման կարօտ բազմութիւններու համար հանդիսացաւ բազմարդիւն դպրոց մը որ երբեք չնահանջեց իր գերէն ու գործէն:

Մխիթարեան ուխտի հրատարակչական ու գրական բազմութիւ ու բազմատեսակ ձեռնարկներուն մէջ, «Բազմալեզու» գեղեցկագոյն գոհար մըն է անկասկած, որուն էջերուն մէջ արեւմտեան շունչին զուգընթաց կը տիրապետէ հայ լեզուի, գրականութեան ու արուեստի գեղեցկութիւնը:

Մեր մշակոյթի տաճարէն ներս, դարաւ շրջանի մը փոթորիկներուն, աւերներուն

եւ աղէտներուն մէջ, լոյսի անմար կանթեղումը եղաւ «Բազմալեզու», որուն լոյսը անընդհատ պլպլայց հայ ժողովուրդի սրտին ու մարին մէջ: Եւ անուրանալի է որ այդ լոյսով արծարծուեցաւ տառապող զանգուածներու մէջ յայտն ու հաւատքը, ինչպէս նաեւ մեր լեզուի գոհարներով ու արուեստի հրաշալիքներով արթնցաւ ու զօրացաւ մեր ցեղի մեծութեան դադարաւոր, որ մեծապէս հարկեց այն ճամբաները որոնք այսօրուան քաղաքակրթութեան մէջ հայուն պարզեցնելու պատասխար տեղ մը:

Անշուշտ անհնար է ընդհանուր ակնարկ մը այս սեղմ տարբերուն մէջ «Բազմալեզու»ի կեանքին ու գործին վրայ, մանաւանդ երբ այդ կեանքն ու գործը սահմանուած են զարգանալու հայ մշակոյթի անձայրածիր կալուածին մէջ: Սակայն այս հաղձեղ տղերն ալ բաւական են, մանաւանդ երբ նկատի ունենանք հարկերամեայ այս էջը որ կը դառնայ «Բազմալեզու»ի կեանքի պատմութեան վրայ, իրրեւ փառքի պատկ, որուն զեղնած ծաղիկներուն մէջ ապագայ սերունդները ոչ միայն պիտի գտնեն թարմութիւն, ճիշտութիւն եւ գեղեցկութիւն, այլ նաեւ ներշնչում նոր ստեղծագործութիւններու համար:

Ա. ՀԱՏԱՆԻՍԵՆ

ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Պուէմոս Այրէս, 5 փետր. 1948

Գերայարգելի
Հ. Սրապիոն վարդապետ Ուլունցեան
Ընդհ. Արարձայր Մխիթարեան Միաբանութեան
Ի Մայրաթաղի Ս. Ղազարու վիմանոց

Գերյ. Հայր,

Լրագրական դարաշրջան մը՝ սրտադին շնորհաւորելի եւ գնահատելի երեւոյթ մըն է: Մեծ է եւ լուրջ Գիրքի ծառայութիւնը, երբ ան առաջնորդուած է ճշմարտութեան

եւ ողջամիտ գիտութեան ջահով՝ ամէն մարդի մէջ:

«Բազմալեզու» անտարակուսելիօրէն բերած է ու կը բերէ իր նպատակը՝ հայ իմացական եւ հոգեկան հին ու նոր արժէքներու ծանոթացման եւ հայ Ոգւոյն մշակման սրբազան եւ պատասխանատու աշխատանքին, ցոլացնելով՝ տոհմիկ ներշնչումներով անած ու գործած վանական՝ Մեծ Մխիթարի ոգին:

Այս ոգւոյն հարազատ շունչին յաւատանազարտ պահպանման մաղթանքներով՝ ընդունեցէք, Գերյ. Հայր, ոչ մոռացութեամբ յապաղած շնորհաւորութիւնները նաեւ ստորագրեալիս՝ որ, իրրեւ մէկը Նախկին սաներէն Մխիթարեան վարժաբանաց՝ Ի Տրապիզոն եւ Ի Վենետիկ, յարգանք կը պարտի նոյնպէս Ս. Ղազարու ազգային հարկերամեայ այս Ձայնին՝ «ԲԱԶՄԱՎԵՂ»ին:

Թող անոր դարերու շրթան, ոսկի եւ աղամանդ օղակաւորումներով, երկարի՛ Ազգին դոյութեան տեղողութեան չափով եւ Աստուծոյ օրհնութեամբ:

Կաթ. Պատուիրակ Հարաւ. Ամերիկայոց
Ողջունի սիրոյ
Ազգային

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՍ

ԻՄ ՈՒՂԵՐԶԸ ԱՆՓԱՌ Բազմալեզուին
(Միլանի տօնակատարութեանց առթիւ)

Վենետիկ վաղուց ի վեր կապուած էր Հայոց աշխարհի եւ հայ ժողովուրդի հետ, բայց այդ կապը լոկ առեւտրական բնոյթ ունէր: Մինչդեռ երկու եւ կէս դար առաջ Մխիթարով կը ստեղծուի նոր կապ մը երկու երկիրներէ եւ երկու ժողովուրդներէ միջեւ՝ հայ մշակոյթի, հայ գրականութեան եւ հայ հանճարի վերածաղկման համար թափուած ճիգերով գեղարուեստի այդ քաղքին մէջ, բանալով նոր շրջան մը ազգային մշակութային կեանքին՝ որ կը կոչուի «Մխիթարեան դարաշրջան»:

Յիշատի թէ դարուն հայ գրական արժէքների եւ մատենագրական հազարապետ գանձերի նախանձախնդիր կ'ըլլայ լուսաւորման եւ ուսումնասանք Մխիթար